ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2022 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽՈՐՈՇԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հոկտեմբերի 19-ի գրությունը, ըստ որի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Արման Ունանյանը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը նախատեսում են Կիպրոսի Հանրապետությունում գրանցել նոր ընկերություն՝ «Մոլիտրո Հոլդինգս Լիմիթեդ», որը ձեռք կբերի Ընկերության միակ բաժնետեր «Ֆիլոր Վենչրս Լիմիթեդ» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը, և խնդրել է համաձայնություն տալ «Մոլիտրո Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից «Ֆիլոր Վենչրս Լիմիթեդ» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի ձեռքբերմանը,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 21-ի №ՍԾ/34.2-Մ2-10/3582-2021 գրությանն ի պատասխան Ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 26-ի №639/10-21 գրությունը, որով վերջինս ներկայացրել է տեղեկատվություն «Մոլիտրո Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ու զարգացմանն (ընդլայնման) ուղղված աշխատանքների կատարման և ներդրումների իրականացման մտադրությունների վերաբերյալ,

գ) «Մոլիտրո Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր «Ֆիլոր Վենչրս Լիմիթեդ» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի ձեռքբերմանը համաձայնություն տալու հարցի քննարկման շրջանակում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության

նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2021 թվականի նոյեմբերի 19-ի №01/11.1/7202-2021 գրությամբ հայցվող տեղեկատվության (գործարքի գնի, դրա հիմնավորումների, ձեռքբերման համար նախատեսվող գումարի ծագման աղբյուրի, ձեռքբերումից հետո ընկերության պարտավորությունների, ընկերության հետագա զարգացման ուղիների և իրականացվելիք ներդրումների) վերաբերյալ Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի №717-12/21 գրությամբ ներկայացված տեղեկատվությունը,

դ) Նախարարության 2022 թվականի հունվարի 11-ի №01/11.1/101-2022 գրությունը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հետ քննարկումների արդյունքում չի առարկում «Մոլիտրո Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից Ընկերության միակ բաժնետեր «Ֆիլոր Վենչրս Լիմիթեդ» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի ձեռքբերմանը,

ե) որ քննարկման արդյունքում փաստվել է, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Մոլիտրո Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր «Ֆիլոր Վենչրս Լիմիթեդ» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի ձեռքբերմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընկերությանը՝ նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը՝ ներառյալ պայմանագրի պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունվարի 2022թ.